ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱ՝

<<Սովորողների հետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերը, ինքնաստուգում, ինքնավերահսկում>>

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ Օժենյա Արտավազդի Հարոյան
(Աշտարակի թիվ 4-րդ դպրոց)

Աշտարակ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ներածություն……...…..3

- Աշակերտների ինքնուրույնությունն իբրև անձի ձևավորման խթան…….....……...…….6

- Տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները…….....…....……10

- Ինքնուրույն աշխատանքի ի՛նչ տեսակներ կարելի է կիրառել տարրական դասարաններում …….....……....12

- Եզրակացություն…….…….……16

- Օգտագործված և երաշխավորվող գրականություն……...……..17

Սովորողների հետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերը, ինքնաստուգում, ինքնավերահսկում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

20-րդ դարը պատմության մեջ կմնա, որպես տեղեկատվական հասարակության ձևավորման դարաշրջան: Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաները դարձել են զարգացած երկրների հասարակական կյանքի կարևոր տարրերը, իսկ գիտելիքն ու տեղեկությունը՝ առաջընթացի որոշիչ գործոններ: Ամենահզոր կապիտալ է դառնում մարդը, նրա ինտելեկտուալ ու ստեղծագործական ընդունակությունները: Ժամանակակից աշխարհը մեծ զարգացումների, սրընթաց փոփոխությունների աշխարհ է. գիտական հայտնագործություններն անսպասելի արագությամբ հաջորդում են մեկը մյուսին՝ ձևավորելով նոր արժեքներ: Մեր պատկերացումների համակարգ են ներխուժում <<հանդուրժողականությունը>>, <<շարժունակությունը>>, <<թիմային աշխատանքը>>, <<ինքնուրույնությունը>>, <<համագործակցային ուսուցումը>> և այլն:

Գիտելիքների արագ զարգացման և նրանց մի մասի հնացման պայմաններում ուսուցման բովանդակությունը ևս կրում է համապատասխան փոփոխություններ: Եթե սովորողը տիրապետում է տվյալ գիտության հիմունքներին և ընդունակ է սովորելու, ապա նոր իրավիճակներում նա կարող է գիտելիքների պակասը լրացնել ինքնուսուցմամբ:

Գլոբալացվող և սրընթաց զարգացումների աշխարհում, երբ ավանդույթներն իրենց դաստիարակիչ և ուղղորդող գործառույթները կորցնում են, մարդու ինքնուրունությունը, որպես անձնային որակ առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում: Ինքնուրունությունը սեփական կյանքը կազմակերպելու, սեփական հոգևոր ու մտավոր հնարավորությունները գիտակցելու, գնահատելու և ըստ այդմ իր զարգացման ուղին ընտրելու մարդու ընդունակությունն է: Ինքնուրունության բարձր մակարդակը մատնանշում է մարդու սեփական ուժերի հանդեպ վստահությունը, ինքնագիտակցության և հետևաբար, նաև հավակնությունների բավարար մակարդակի առկայությունը: Սակայն, նման որակը դատարկ տեղում չի ձևավորվում.

Հանրակրթական համակարգից պահանջվում է մշակել ինքնուրունության կայացմանը սատարող ռազմավարություն և իրացնել այն ինչպես կրթության բովանդակությամբ ու գնահատման համակարգով, այնպես էլ ուսուցման տեխնոլոգիաներով:

Ինքնուրունության ձևավորման նախապայմանը ազատությունն է: Որպեսզի սովորողը ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ հնարավորությունը տալ: Կրթության յուրաքանչյուր հաջորդ աստիճանում աշակերտի ազատության սահմանները պիտի ավելի ընդարձակվեն: Ինքնուրունությունը կարող է ձևավորվել միմիայն համապատասխան գործունեության պրոցեսում: Եթե երեխային սովորեցնում ենք պարտադրաբար, եթե նրան ուսումնական գործունեության ազատության, սխալվելու և սեփական
սխալների հիման վրա ճշմարիտ ճանապարհ դուրս գալու իրավունք չենք տալիս, երբեք նրանից ինքնուրույն մարդ չի ձևավորվի: Սովորողի հնարավորինս ազատ ուսումնական գործունեություն ծավալելու իրավունքի ոտնահարումը շատ հոգեբանական վնասների պատճառ է դառնում: Երեխաների ինքնագիտակցությունը զարգանում ու զորանում է մարդկանց հետ շփումների արդյունքում: Սահմանափակելով նրա ինքնուրույնության ու ինքնատիրապետության դրսևորումները, դպրոցը չի թողնում երեխային գիտակցել ինքն իրեն, զգալ իր ներունակ հնարավորություններն ու լավագույնս դրսևորել դրանք: Արդյունքում ձևավորվում է, այսպես կոչված, ֆունկցիայի մարդը: Եթե նա քիչ, թե շատ խելացի է՝ կարող է լավ կատարել հանձնարարություններ, իսկ ահա ստեղծագործաբար աշխատել, խնդիր դնել, ծրագիր ու պլան կազմել և ինքնուրույն իրականացնել դրանք՝ իվիճակի չէ. Նա չունի ինքն իր հանդեպ այդ վստահությունը:

Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը:

Ինքնուսուցման պարագայում սովորողն ինքն է կազմակերպում , կարգավորում և հսկում իր իմացական գործունեությունը: Ինքնուսուցումը իմացական գործունեության բարձրագույն մակարդակն է, երբ անձը պատրաստ է ինչ-որ չափով դուրս գալ ուսումնական պահանջների սահմաններից, անցնել ազատ իմացական

գործունեության,ինքն իր առաջ դնելով խնդիրներ: Աշակերտին ինքնուսուցման ճանապարհ դուրս բերելու խնդիրը ենթադրում է նրա մեջ սաղմնավորել և զորացնել ինքնակրթության
պահանջմունքն, ինչպես նաև զարգացնել վերջիններիս բավարարման համար անհրաժեշտ ընդունակությունները:

Ինքնուրույն ուսումնական աշխատանքներ լավագույնս կարելի է իրականացնել ուսուցման գործընթացը մասնակիորոն հետազոտական գործընթացի վերածելով: ՈՒսումնական աշխատանքները, որ կատարում է սովորողը դպրոցում, թե տանը, պետք է ունենան իրենց մեջ հետազոտական գործունեության տարրեր և այդօրինակ գործունեության չափաբաժինը կրթության յուրաքանչյուր հաջորդ աստիճանում համապատասխան չափով ավելանա:

Մեր կրթության համակարգում տարրական կրթությունը առավել պատշաճ ուշադրության է արժանի: Տարրական դպրոցում են հիմնականում դրվում սովորողների ինտելեկտուալ, բարոյական և հոգևոր որակների ձևավորման ու զարգացման հիմքերը: Եվրոպական որոշ երկրների կրթական հայեցակարգերում նշված է, որ սովորողների ողջ ուսումնական գործունեության հաջողության գրավականը նախադպրոցական և տարրական կրթությունն է: Կրթության տանելի որակ ապահովելու համար, անհրաժեշտ է, որ նա ընդհանուր պատկերացում ունենա համաշխարհային կրթական զարգացումների մասին և շարունակաբար հարստացնի իր մեթոդական զինանոցը:

Երեխայի ֆիզիկական և հոգևոր առողջությունն ապահովելը դպրոցի պարտականությունն է: Դպրոցը պետք է մանկավարժական գործունեությունը համատեղի երեխայի հանդեպ հոգատարության հետ. Ցույց տա նրան մանկավարժական, հոգեբանական , ֆիզիկական և մշակութային օգնություն: Առողջ ապրելակերպի պահանջն այսօր առավել քան արդիական է: Սովորողների առողջությունն վատթարանում է, ամեն ինչից զատ, նաև ուսուցման գործընթացում: Հայտնի են զուտ դպրոցական համարվող մի շարք հիվանդություններ, ինչպիսիք են ողնաշարի ծռվածքը, կարճատեսությունը,նյարդային համակարգի տարազան խանգարումները և այլն: ՈՒսուցիչների խնդիրն է սովորողների մեջ ձևավորել առողջ ապրելակերպ ենթադրող սովորություններ, ծանոթացնել նրանց առողջության պահպանման

միջոցներին ու հնարներին և, հնարավորության սահմաններում, ապահովել ֆիզիկական ակտիվության բարձր մակարդակ:

Աշակերտների ինքնուրույնությունն իբրև անձի ձևավորման խթան

Դպրոցում ինչպես են կազմակերպվում ինքնուրույն աշխատանքները և արդյոք դրանք ինքնուրույն աշխատանքներ են: ՈՒսուցիչները հաճախ կիրառում են աշակերտների ակտիվությունը և ինքնուրունությունը խթանող հնարներ և դրանց կիրառմամբ <<սովորեցնում են>> աշակերտներին ինքնուրույն աշխատել: Խորհենք՝ արդյոք նմանատիպ աշխատանքները կարող են ինքնուրույն աշխատանք համարվել:Նախ դիտարկենք, թե ինչ տարբերություն կա <<ինքնուրույնություն >> և <<ինքնուրույն աշխատանք>> արտահայտությունների միջև: Ինքնուրույնությունը անհատի անձնային որակ է, իսկ ինքնուրույն աշխատանքը՝ ուսումնական աշխատանքի ձև:

Ինքնուուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռք բերած ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց:

Ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատի որակ: Այն հնարավորություն է ընձեռում իրականացնել անհատական մոտեցման սկզբունքը՝ դրանով իսկ նպաստելով գիտելիքների գիտակցաբար յուրացմանը:

Կարելի է ասել, որ ինչպես դպրոցում , այնպես էլ ողջ կյանքի ընթացքում կատարվող ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում ճանաչողական կարողություններն ու հմտություններն:

Տարական դասարաններում ինքնուրույն է համարվում այն աշխատանքը, որի ընթացքում սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակը, դրա կատարման կարգը և կատարում են այն՝առանց ուսուցչի անմիջական մասնակցության:

Ինքնուրույն աշխատանքի հմտություններն ինքնին չեն ձևավորվում, դրանք անհրաժեշտ է ձևավորել, և դրանում մեծ դեր ունի ուսուցիչը: Եևեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դրսևորվում է՝ դասից դաս, դասարանից դասարան:

Մտածողության ինքնուրույնությանը բնորոշ են հետևյալ կարողությունները.

-առանձնացնել գլխավորը, տեսնել ընդհանուր օրինաչափությունը և կատարել ընդհանրացնող եզրահանգումներ,

-հետևողական, տրամաբանորեն հիմնավորել իր գործողությունները և վերահսկել

դրանք,

-գիտելիքները կիրառել անծանոթ պայմաններում՝ հաճախակի բարդացնելով՝ ստեղծագործաբար, ոչ ստանդարտ մոտեցմամբ,

-ստանալ արդյունքները՝ առանց օգնության դիմելու:

Ընդհանուր առմամբ, տարբերվում են աշակերտների ինքնուրույնության չորս մակարդակ.

Առաջին մակարդակ՝ պարզ վերարտադրողական ինքնուրույնություն: Այս մակարդակի ինքնուրույն գորրծունեությունը հատկապես վառ դրսևորվում է վարժությունների կատարման ընթացքում, որոնք պահանջում են գիտելիքների պարզ վերարտադրություն, երբ սովորողները, իմանալով կանոնները, իրենց ձեռքի տակ ունենալով պատրաստի նմուշը, ինքնուրույն լուծում են առաջադրանքները:

Ինքնուրույնության առաջին մակարդակ ունեցող աշակերտն առաջադրանքների կատարման ընթացքում անպայման կիրառում է իր ձեռքի տակ եղած օրինակը, նմուշը, մեթոդը: Եթե առաջադրանքը փոքր-ինչ չի համապատասխանում տրված նմուշին, ապա աշակերտը կդժվարանա լուծել այն: Ընդորում, նա հաճախակի հրաժարվում է կատարել առաջադրանքն այն պատճառաբանությամբ, որ այսպիսի առաջադրանքներ դեռևս չի կատարել:

Ինքնուրույնության երկրորդ մակարդակը կարելի է անվանել ընտրովի ինքնուրույնություն: Այս մակարդակում ինքնուրույնությունը

դրսևորվում է այսպես. Աշակերտը մի շարք կանոններից, դատողությունների օրինակից, սահմանումներից և այն կարողանում է ընտրել մեկը և կիրառել այն նոր առաջադրանքների ինքնուրույն կատարման գործընթացում:

Ինքնուրույնության այս մակարդակում սովորողները կիրառում են մտավոր գործողություններ կատարելու կարողություններ՝ համեմատություն, վերլուծություն, համադրություն և այլն: Վերլուծելով առաջադրանքի՝ պահանջները աշակերտն ընտրում է արդեն ձեռք բերած գիտելիքներից, կարողություններից այն կարևորը, որն անհրաժեշտ է տվյալ առաջադրանքի կատարման համար :

Մասնակի - որոնողական ինքնուրույնությունն՝ ինքնուրույնության երրորդ մակարդակն է: Այս մակարդակում աշակերտն առաջադրանքների կատարման ընթացքում կիրառում է առավել ընդհանրական կարողություններ, որոնք ձեռք է բերել այլ առարկաների և այլ թեմաների ուսուցման ընթացքում: Նա կարողանում է կատարել ինքնավերահսկում և ինքնագնահատում, կարողանում է ինքնուրույն պլանավորել և կազմակերպել իր ինքնուրույն գործունեությունը: Սակայն այս մակարդակում դեռևս աշակերտը չի դրսևորում ստեղծագործական մոտեցում:

Ստեղծագործական- հետազոտական գործունեություն ծավալելու մակարդակն՝ ինքնուրույնության չորրորդ մակարդակն է:

Ինքնուրույն աշխատանքը պետք է կազմակերպել այնպես, որպեսզի այն համապատասխանի յուրաքանչյուր աշակերտի կարողություններին, այսինքն ինքնուրույն աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները պետք է լինեն տարբերակված: ՈՒսուցիչը պետք է իր համար հստակեցնի տարբերակված ինքնուրույն աշխատանքի նպատակը՝ ապահովել յուրաքանչյուր աշակերտի կատարած աշխատանքի առավել բարձր արդյունավետությունը ինչպես դասի ժամանակ, այնպես էլ տանը: Դրա համար անհրաժեշտ կլինի հաշվի առնել յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկությունները՝ <u>հիշողության, մտածողության, նախապատրաստվածության մակարդակը և այլն:</u>

Կան տարբերակված մոտեցման հետևյալ ձևերն ու մեթոդները.

- Խմբային,
- Զույգով աշխատանք,
- Անհատական ինքնուրույն աշխատանք:

Շատ արժեքավոր է հատկապես խմբային տարբերակված մոտեցումը, երբ խմբերը ձևավորվում են որոշակի մոտեցմամբ: Խմբերը ձևավորվում են ուսուցչի կողմից սովորողների զարգացման տարբեր մակարդակների հիմքով (կամ գիտելիքների մակարդակը հաշվի առնելով, կամ էլ՝ կարողությունները, հետաքրքրությունների շրջանակը):

Աշակերտների մի խմբի համար կարելի է մշակել առաջադրանքներ, որոնք հնարավորություն են ընձեռում բարձրացնել ակտիվությունը գիտելիքների ընկալման, իմաստավորման և ամրապնդման գործընթացում, զարգացնում են տրամաբանական մտածողությունը, նպաստում են գիտելիքների համակարգմանն ու կատարելագործմանը:

Աշակերտների մեկ այլ խմբի համար կարելի է մշակել առաջադրանքներ, որոնք պահանջում են առավել ինքնուրույնություն, մտավոր լարում և ստեղծագործական որոնումներ: Խմբերը կարող են ձևավորվել նաև հենց իրենց՝ աշակերտների ցանկությունների հիմքով: Այս դեպքում նույն հետաքրքրություններ, աշխատանքի նույն ոճ ունեցող աշակերտներն աշխատում են համատեղ:

Դպրոցներում առավել շատ է կիրառվում տարբերակված ինքնուրույն աշխատանքը, որի դեպքում հաշվի են առնվում անհատական առանձնահատկությունները: Անհատականացումն այս դեպքում իրականացվում է գլխավորապես այնպես, որ սովորողներին տրվում է ոչ թե միանման առաջադրանքներ, այլև տարբեր տարբերակներ:

Տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները

Տարրական դասարաններում ուսուցչի գլխավոր խնդիրն է ուսումնական գործունեություն ծավալելու կարողության ձևավորումն, իսկ դա հնարավոր է սովորողների ինքնուրույն գործունեության ճիշտ կազմակերպման միջոցով : Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, սովորողների ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի կառուցվածք: Այն իր մեջ ներառում է հինգ փուլ.

- **կազմակերպչական.** Սա երեխաների աշխատանքային միջավայրի նախապատրաստումն է (բառարանների, հուշաթերթիկների բաշխում, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքի ընթացքում): Աշխատանքի միջավայրի նախապատրաստումը կարևորագույն պայման է արդյունավետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար:
- **նախապատրաստական**. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է կամ մեկ անգամ ևս հիշեցնում երեխաներին հանգիստ նստել, չխանգարել ընկերներին, պահպանել լռություն և կարգուկանոն, ուշադիր աշխատել, ինքնքաստուգում կատարել և այլն, այսինքն՝ այն ամենը, ինչը կապահովի աշխատանքի արդյունավետությունը:

- **կողմնորոշիչ.** Այս փուլի ընթացքում աշակերտը ծանոթանում է առաջադրանքի բովանդակությանը: Նա ստանալով առաջադրանքը՝ ընթերցում կամ վերընթերցում է պայմանը, դիտարկում է առարկան կամ գծագիրը, ընթերցում է տեքստը և այլն: Այս փուլի ընթացքում սովորողն իմաստավորում է առաջադրանքը, առանձնացնում է , թե ինչ է տրված, ինչ պետք է իմանալ կամ կատարել: Երեխաները ծանոթանում են հուշաթերթիկի բովանդակությանը: Բացի դրանից,

այս փուլում ուսուցիչը կարող է բաշխել աշխատանքի պլանը: Պլանը կարելի է գրառել նաև գրատախտակին: Գրատախտակին փակցվում է նաև թեմայի շուրջ մշակված պաստառները, սխեմաները և այլն: Այս փուլում ձևավորվում է ուսումնական աշխատանք ծավալելու կարևորագույն կարողություններից մեկը՝ աշխատանքի համար անհրաժեշտ նյութեր ընտրելու կարողությունը:

- **Հիմնական փուլ.** Այս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանքը:

- **Ամփոփիչ փուլ.** Այս փուլում կատարվում է անդրադարձ: ՈՒսուցիչը գնահատում է, քննարկում, վերլուծում ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը, արդյունքները

- **(Ստուգիչ) փուլ.** այս փուլը նպատակահարմար է առաջադրանքների կատարման ստուգման համար, որի ընթացքում աշակերտը, կատարելով առաջադրանքը, ինքն իր սեփական նախաձեռնությամբ ստուգում է աշխատանքը և գնահատում այն, այսինքն՝ իրականացնում է ինքնաստուգում և ինքնավերահսկում:

Սովորողների ինքնուրույն աշխատանքը կազմակերպելիս ուսուցիչը հիմնականում պետք է կարողանա պատասխանել հետևյալ հարցերին.

-տվյալ ուսումնական նյութի ուսումնասիրման գործընթացի ո՞ր փուլում է նպատակահարմար կազմակերպել ինքնուրույն աշխատանքը,

-ինքնուրույն աշխատանքի ի՞նչ տեսակներ կարելի է ընտրել և կիրառել գիտելիքների ստուգման փուլում:

Հատկապես տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական հուշաթերթիկներ, հրահանգներ: Դրանք

նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու համար անհրաժեշտ կարողություններ:

Ինքնուրույն աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ ինքնուրույն աշխատանքի համար առաջադրանքներ առաջադրելը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով: Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները, և վերջապես, նրանք հնարավորություն են ունենում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն: ՈՒսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրանց տեղը դասի ընթացքում , բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ: Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարան:

Ինքնուրույն աշխատանքի ինչ տեսակներ կարելի է կիրառել տարրական դասարաններում

Ինքնուրույն աշխատանքի հիմնական տեսակները կարելի է դասակարգել ըստ մի քանի հատկանիշների, որոնք միևնույն ինքնուրույն աշխատանքը բնութագրում են տարբեր տեսանկյուններից: Ինքնուրույն աշխատանքի դասակարգում՝ ըստ հատկանիշների.

- **Ըստ ուսումնական նպատակների՝**
- Հիմնարար գիտելիքների կրկնություն և նոր նյութի ընկալմանը նախապատրաստող
- Նոր նյութի ուսումնասիրությանը նպաստող
- Գիտելիքները համակարգող

- Որոշակի կարողություններ զարգացնող
- Ստուգող, վերահսկող:
- **Ըստ ճանաչողական գործունեության բնույթի**
- **Ըստ տրված նմուշի** (օրինակ՝ գրել տառեր, թվեր, սոսնձել տուփ և այլն), այսինքն՝ աշխատանքներ, որոնք առավելապես հիմնված են ընդօրինակման վրա: Այսպիսի աշխատանքների կատարման ընթացքում աշակերտների ինքնուրույն գործունեությունները սահմանափակվում են պարզ վերարտադրմամբ՝ ըստ նմուշի կրկնելով գործողությունները: Այնուամենայնիվ, այսպիսի աշխատանքների դերը բավականին մեծ է:
- **Կառուցողական,** որոնք ստեղծագործական մոտեցում են պահանջում: Ընդ որում, կամ ցույց են տալիս առարկան, որի շուրջ պետք է աշխատեն, կամ էլ նշում են հարցը, թեման, որը պետք է բացահայտեն: Օրինակ՝ պատրաստել որևէ խաղալիք, հորինել շարադրություն որևէ թեմայով և այլն: Սովորողներին տրվում է որոշակի ազատություն, ինքնուրույնություն ինչպես բովանդակության որոշման, այնպես էլ աշխատանքի հնարների ընտրոիթյան մեջ:

Կառուցողական ինքնուրույն աշխատանքները սովորեցնում են վերլուծել իրադարձությունները, երևույթները, փաստերը, ձևավորում են ճանաչողական գործունեության հնարները և մեթոդները կիրառելու կարողությունները, նպաստում են ճանաչողության նկատմամբ ներքին դրդապատճառների զարգացմանը, պայմաններ են ստեղծում դպրոցականների մտավոր ակտիվության զարգացման համար: Այս տիպի ինքնուրույն աշխատանքները հիմք են ձևավորում աշակերտի ստեղծագործական գործունեության հետագա զարգացման համար:

- .**Ստեղծագործական-հետազոտական,** որոնք երեխաների ինքնուրույն գործունեության գագաթնակետն են հանդիսանում: Այդ աշխատանքներն ամրապնդում են գիտելիքների ինքնուրույն որոնման հմտություններին: Դրանք ստեղծագործող անձի ձևավորման արդյունավետ միջոցներից են: Ստեղծագործական բնույթի ինքնուրույն աշխատանքները հնարավորություն են ընձեռում աշակերտներին ձեռք բերել իրենց համար սկզբունքորեն նոր գիտելիքներ:
- **Ըստ կազմակերպման ձևի՝**
- **Ընդհանուր** (ֆրոնտալ), երբ բոլոր սովորողները կատարում են միևնույն աշխատանքը,

- **Խմբային,** երբ սովորողների տարբեր խմբեր աշխատում են տարբեր առաջադրանքների վրա:
- **Անհատական,** երբ սովորողներից յուրաքանչյուրն աշխատում է հատուկ առաջադրանքների վրա:
- **Ըստ դիդակտիկ նյութերի գործունեության՝**
- **Աշխատանք դասագրքով, տեղեկատու գրականության շուրջ** (բառարաններ, հանրագիտարաններ և այլն): Տարրական դասարաններում մեծ տեղ են հատկացվում գրքի, գեղագիտական տեքստի, նկարազարդման շուրջ կատարվող ինքնուրույն աշխատանքներին: Գրքի շուրջ ինքնուրույն աշխատելու կարողությունը սովորելուն նպաստող ամենակարևոր կարողություններից է: Առանց այդ կարողության տիրապետման հնարավոր չէ իրականացնել ուսումնական գործընթացը, հնարավոր չէ իրականացնել գիտելիքների լիարժեք յուրացումը, քանի որ յուրացման գործընթացի կարևոր կառուցվածքային տարրեր, ինչպիսիք են՝ իմաստավորումը և ամրապնդումը, իրականացվում են դասագրքի շուրջ կատարվող աշխատանքի ընթացքում: Գրքի հետ աշխատելու կարողություն չունենալու պատճառով ուսումնական աշխատանքը աշակերտի համար դառնում է տանջալի աշխատանք: Գրքի հետ աշխատելու կարողությունների զարգացումն իրականացվում է բոլոր առարկաների դասերի ընթացքում:
- **Շարադրություններ** (ըստ հենակետային բառերի, նկարների շուրջ և այլն):
- **Դիտումներ և գործնական աշխատանքներ:** Դիտումների համար որպես դիտարկվող առարկաներ կարող են լինել շրջապատող առարկաները և երևույթները: Սովորողները հաշվում են, չափում, ստեղծում: Նրանք դիտարկում են առարկաները և երևույթներն բնության մեջ, անցկացնում են փորձեր՝ կատարելով գործնական աշխատանքներ:
- **Աշխատանք՝ բաշխիչ նյութերի կիրառմամբ:**
- **Գրաֆիկական աշխատանքներ**:
- **Ինքնուրույն աշխատանքներ,** որոնք կապված են դիդակտիկ նյութերի ստեղծման հետ: Սովորողները պատրաստում են ինքնաշեն գրքեր, <<Ես և շրջակա առարկայի>> ալբոմներ, զանազան թեմաներով քարտեր և այլն:
- **Ըստ կատարման տեղի՝**
- Դասարանում,

- Արտադասարանական կամ արտադպրոցական ուսումնական միջոցառումների ժամանակ,
- Տանը:

Նպատակը՝

- Զևավորել ինքնուրույն աշխատելու կարողություն:
- Զևավորել ինքնուրույն մտածելու, որոնելու, նախապատրաստվելու, կողմնորոշվելու, կիրառելու կարողություն:
- Զևավորել ինքնուրույնություն:

Վերջնարդյունք՝

- Կկարողանա ինքնուրույն աշխատել:
- Կկարողանա ինքնուրույն մտածել, որոնել, նախապատրաստվել, կողմնորոշվել, կիրառել:
- Կկիրառի ինքնուրույնություն կյանքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ ինքնուրույն աշխատանքի ուսուցումն ունի կրթական, դաստիարակչական, գործնական, զարգացնող, կողմնորոշիչ նպատակներ: Անհրաժեշտ է հիշել, որ չպետք է հաղորդել միայն գիտելիքներ, այլ պետք է ուսուցանել զարգացնող ոճով, որ աշակերտները ստացած գիտելիքները կարողանան կիրառել կյանքում և այլ պայմաններում: Ուսուցման գործընթացում լայն ոլորտ տրամադրելով ժամանակակից տեխնոլոգիաներին՝ չպետք է անտեսել ավանդական փորձի նվաճումները, կյանքում քննություն բռնած մեթոդները: Ինքնուրույն աշխտել երեխայի մեջ պետք է սերմանել հենց տարրական դասարաններից, որպեսզի հասարակության մեջ ձևավորվի և կայանա անհատը: Պետք է թողնել երեխային ազատ , անկաշկան , ձևաչափից փոքր ինչ շեղվի, բայց ինքնուրույն կատարի իրեն հանձնարարված աշխատանքը: Եթե անհրաժեշտ է ուղորդել, ապա այնպես անել , որ երեխան չզգա դա, այլ մտածի, որ այդ արդյունքին ինքն է հասել ինքնուրույն:

Օգտագործված և երաշխավորված գրականություն

- Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս 2, <<Զանգակ>> հրատ. 2013թ.:
- Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, <<Զանգակ>> հրատ. 2015թ.:
- Ա. Ալեքսանյան,Դպրոցի հոգեբանի մեթոդական ուղեցույց, Անտարես, Երևան,2011թ.:
- Лавринко Т. А. Как научит детей решать задачи: Методические рекомендации для учителей начальных классов.- Саратов: Лицей, 2000.-64с:
- Ղեվոնդ Ալիշյան, Հայ դասականների գրադարան. Երկեր, <<Ազգային հատուկ դաստիարակություն>>, <<Սովետական գրող>> հր. Երևան 1981թ.:
- Մեթոդական ձեռնարկ 1-4 դասարանների համար./ հեղ. Ժ. Ավետիսյան/ Երևան, ԱՍՏՂԻԿ գրատուն2009թ.:
- Մ. Աստվածատրյան, Արնուդյան, Ս. Վարդումյան, Ի. Օհանյան, Մ. Պետրոսյան, Ինտեգրացված թեմատիկ միավորներ, ԱՅՌԵՔՍ, Երևան, 2003թ.:
- Ջ. Գյուլամիրյան, Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, <<Լույս>> հրատ., Երևան, 1998թ.: